



մամլո հաղորդագրություն

Օրանժ Արմենիա ՓԲԸ
“Էրեբունի Պլազա”
Բիզնես կենտրոն
Վազգեն Սարգսյան 26/1
Երևան 0010, Հայաստան

Orange-ն արդեն ունի 100 000 բաժանորդ

դեկտեմբերի 9, Երևան

Այսօր Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյուֆուան սվերներ հանձնեց Էջմիածին քաղաքի բնակիչ 24-ամյա Վերոնիկա Առուստամյանին, ով երեկ դարձավ ընկերության 100 000-րդ հաճախորդը՝ գնելով “Խոսենք” կանխավճարային քարտը Orange-ի Էջմիածնի խանութում:

Արարողության ընթացքում Orange-ի գլխավոր տնօրենը շնորհակալություն հայտնեց ընկերության բոլոր հաճախորդներին Orange-ին վստահելու և նրա ծառայություններն ընտրելու համար:

„Մեզ համար կարևոր է յուրաքանչյուր բաժանորդի վստահությունը: Հուսով ենք՝ նրանք երկար կօգտվեն Orange-ի ծառայություններից: Մենք անելու ենք ամեն ինչ՝ բարելավելու և կատարելագործելու մեր կողմից առաջարկվող ծառայությունները”, - ասաց Բրունո Դյուֆուան լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

Բրունո Դյուֆուան լրագրողներին տեղեկացրեց նաև, որ նոյեմբեր ամսվա ընթացքում ընկերությունը որոշակի տեխնիկական խնդիրներ է ունեցել ինտերնետի ոլորտում, ինչը հետեանք է եղել մեկ ամսվա ընթացքում ինտերնետի օգտագործման աննախադեպ բարձր ցուցանիշի: Փոխհատուցելու համար բաժանորդների հնարավոր անհարմարությունները՝ ընկերությունը նոյեմբեր ամսվա ընթացքում օգտագործված ինտերնետի ողջ ծավալը բաժանորդներին տրամադրել է անվճար: Նախատեսվածից մի քանի անգամ բարձր է եղել նաև մոդեմների պահանջարկը, որի հետեանքով առաջացել էր մոդեմների պակասորդ Orange-ի խանութներում:

„Այսօր ես ուրախությամբ հայտնում եմ, որ ցանցում տեխնիկական խնդիրները վերացված են, իսկ ինտերնետ Հիմա մոդեմի հաջորդ խմբաքանակը շուտով կլինի վաճառքում, ինչը հնարավորություն կտա ընդլայնել շարժական ինտերնետի բաժանորդների քանակը”, - ասաց Բրունո Դյուֆուան:

Orange-ը Հայաստանում շարժական հեռախոսակապի և ինտերնետի ծառայություններ է մատուցում 2009թ. նոյեմբերի 5-ից:

-վերջ-



Orange-ի մասին

Օրանժ Արմենիան, որը Ֆրանս Տելեկոմ Խմբի մասն է կազմում, Հայաստանում հեռահաղորդակցման ծառայություններ մատուցելու լիցենզիան ստացել է 2008թ. նոյեմբերի 19-ին՝ հաղթող ճանաչվելով ՀՀ կառավարության հայտարարած միջազգային բաց մրցույթում:

Orange-ն աշխարհում հեռահաղորդակցության առաջատար օպերատորներից մեկի՝ Ֆրանս Տելեկոմ Խմբի հիմնական ապրանքանիշն է: Orange ապրանքանիշով Խումբն այսօր ինտերնետի, հեռուստատեսության և շարժական հեռախոսակապի ծառայություններ է մատուցում իր գործունեություն երկրների մեծ մասում և սպասարկում է 126 միլիոն բաժանորդի: 2008թ. վերջին Խմբի վաճառքը կազմել է շուրջ 53,5 միլիարդ եվրո (38.1 միլիարդ եվրո՝ 2009թ. առաջին ինը ամսվա ընթացքում): 2009թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ընկերությունն ուներ 190 միլիոն հաճախորդ 32 երկրում, որոնցից 128.8 միլիոնը շարժական հեռախոսակապի բաժանորդներ են, իսկ 13,4 միլիոնը՝ գերարագ ինտերնետի (ADSL) բաժանորդներ ողջ աշխարհում: Orange-ը հեռահաղորդակցության ոլորտում աշխարհի խոշորագույն օպերատորներից մեկն է. Եվրոպայում երրորդը՝ բջջային հեռախոսակապի եւ առաջինը՝ գերարագ ինտերնետի բնագավառում, ինչպես նաեւ ձեռնարկություններին հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող աշխարհում առաջին օպերատորը:

Հավելյալ տեղեկությունների համար՝ lilit.martirosyan@orange-ftgroup.am կամ 095 988 608